

ԱՌԱՆՑ ԴԱԿԱՆԱՆՔԻ

ժամանակակից վէպ Հէնրիկ Սենկևիչի

(Շարունակութիւն 1)

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

16 լուսիս.

Առաւօտեան նոր էի հագնւել, որ հօրաքոյրս եկաւ մօտս և ասաց առանց որ և է նախարանի.

—Գիտես, քո բացակայութեան ժամանակ Կրօմիցկին առաջարկեց ինձ իւր հետ ընկերանալ:

—Իսկ դուք ինչ պատասխանեցիք նրան:

—Մերժեցի առանց երկար մտածելու: Այսպէս ասացի նրան. —«Սիրելիս, իմ ունեցածը ինձ, փառք Աստուծոյ, բաւական է, իսկ Լէօնը իմ մահից յետոյ մեր երկրի ամենահարուստ մարդկանցից մէկը կը լինի: Ինչու գլուխս բախտախնդրութիւնների մէջ քցեմ սէ նախախնամութիւնը փորձեմ: Եթէ քո ձեռնարկութիւններից միլիոններ ես դատելու, քեզ համար դատի, իսկ եթէ ունեցածդ էլ պէտք է կորցնես, ինչու մենք էլ քեզ հետ կորցնենք: Ես այդ տեսակ գործերից ոչինչ չեմ հասկանում, իսկ խառնւել այնպիսի բանի մէջ, որ ինձ անծանօթ է, իմ կանոններից դուրս է: Ուղիղ չէ՞ ասածս:

1) Տես «Մուրճ» 1892 թ. №№ 1—12, 1898 թ. № 1, 2 և 6

—Շատ ուղիղ է:

—Ահա դրա մասին էր, որ ուզում էի քեզ հետ խօսեմ և շատ ուրախ եմ, որ դու էլ ես այդպէս նայում գործի վրայ: Նա, զիտես, մի քիչ նեղացաւ, որ ես նրա գործերը բախտախնդրութիւն անւանեցի, սխեց առաջս դնել իւր յոյսերը ապագայի վրայ և ամեն բան մանրամասն բացատրել: Եթէ այդ բոլորը ճիշդ է, նա յիշաւի միլիոններ կը դատի, և ես ցանկանում եմ, որ նա դատի: Բայց իսկոյն հարցրեցի նրանից. Եթէ գործերդ այդպէս լաւ են դնում, էլ նրա ինչի պէտքն են ընկերները... Պատասխանեց թէ քանի շատ փող վեր դնելի, այնքան մեծ կը լինի օգուտը, թէ այնտեղ ամեն բանի առաջ տանողն ոչմէն է և թէ նա աւելի գերադասում է իրան ընկերացնել մօտ մարդկանց, քան օտարներին: Ես շնորհակալութիւն յայտնեցի նրա բարեկամութեան համար, բայց կրկնեցի իմ մերժումը: Այդ նրան սկի դուր չեկաւ: Նոյն ցաւ յայտնեց, որ ոչ ոք մեզանում գործից բան չի հասկանում և բոլորը վատնում են միայն իրանց ժառանգութիւնը, և աւելացրեց առանց որ և է նախաբացատրութեան, թէ այդ յանցանք է հասարակութեան վերաբերմամբ: Նրա խօսքերը բարկութիւնս բերեցին. «Սիրելի պան Կրօմիցկի, —ասացի ես,—ես կնիկ տեղովս կառավարելով իմ գործերը, ինչ թէ ոչ մի դռօշ չեմ վատնել, այլ և մեծացրել եմ իմ կարողութիւնը, իսկ հասարակութեան վերաբերմամբ յանցանք գործելու մասին ով խօսում է խօսի, միայն թէ նա չխօսի, որ Գլուխովը ծախել է: Ճշմարտութիւն էիր ուզում,—այ քեզ ճշմարտութիւն: Եթէ Գլուխովը ծախած չլինէր, ես ի հարկէ քեզ աւելի կը հաւատայի: Քո գործերի մասին ինչ թէ միայն ես ոչինչ չզիտեմ, այլ և բոլորին էլ նրանք մութն են. մի բան միայն պարզ է, որ Եթէ գործերդ յիշաւի այնպէս լաւ դնային, ինչպէս դու ես նկարագրում, այն ժամանակ դու ընկերներ որոնելու կարիք չէիր ունենայ և իմ մերժումը սրտիդ այդպէս մօտ չէիր ընդունի: Ընկեր նրա համար ես փնտռում, որ փողի կարիք ունես, բայց ոչ մի բոպէ ինձ հետ, ինչպէս հարկն է, անկեղծ չխօսեցիր, իսկ այդ ինձ սկի դուր չի գալիս:

—Յետոյ, նա ինչ պատասխանեց:

—Նա պատասխանեց, թէ նախ և առաջ չի հասկանում, ին-

չո՞ւ Գլուխովը ծախելու պատասխանատու թիւնը միայն իւր վրայ է ընկնում: Գլուխովը ձեռքից թողնողը ոչ թէ ինքն է, այլ նրանք, որոնք իրանց անխելքութեան, ծուլութեան, թեթեամտութեան ու շռայլութեան պատճառով նրա ծախելը անխուսափելի էին դարձրել: Անելկան մարդի վնասիւս բացի պարտքից ոչինչ չունէր: Ինքը ազատել է այնքանը, որքան որ ուրիշը ազատել չէր կարող, և դրա համար նա այժմ շնորհակալութեան փոխարէն լսում է նախատինքներ և... սպասիր, ինչպէս նա ասաց... հոգեցոյց ոգումներ (декламация):

— Սուտ է, — ասացի ես, — Գլուխովը կարելի էր փրկել:

— Ես էլ նոյնն ասացի և աւելացրի, որ Գլուխովի համար փող կը տայի: «Դու կարող էիր, — ասացի ես, — ծախելուց առաջ մի-երկու տող նամակ գրել Անելկային, որ նա ինձ հետ խօսի դրա մասին, և յայտնի է Ասածուն, որ ոչ մի բոլէ չէի տառանի... Բայց այդ քո սիսոեմն է, որ ոչ ոք ոչինչ չիմանայ. Մենք բոլորս հաւատում էինք քո միլիոններին, դրա համար էլ օգնութիւն չէինք առաջարկում: Նա սկսեց հեղնաբար ծիծաղել: «Ինչպէս կարող է, — ասում էր նա, — Անելկայի պէս երևելի տիկինն ու իդէալական էակը զիջանել այնպիսի ստոր բաներով զբաղւելու, ինչպէս են դրամական գործերը կամ իւր մարդու համար մէկի հետ մի բան խօսելը: Երկու անգամ խնդրել եմ նրանից, որ ձեզ հետ խօսի ինձ հետ ընկերանալու մասին, և երկու անգամն էլ նա ինձ վճռական կերպով մերժել է: Ինչ վերաբերում է Գլուխովին, հիմա ծիշդ է խօսելը, երբ նրան ազատելու այլ ևս ոչ մի հնար չի մնացել: Ինկատի առնելով այժմեան մերժումը, իրաւունք ունեմ կասկածելու արդեօք թէ նոյնը չէր լինի և Գլուխովի վերաբերմամբ:

Ես սկսեցի մեծ հետաքրքրութեամբ լսել, այժմ հասկացայ Կրոմիցկու և Անելկայի մէջ եղած տարաձայնութեան պատճառը, — հօրաքոյրս շարունակեց.

— Այդ որ լսեցի, ուղղակի ասացի. «Տեսնո՞ւմ ես, սիրելի պան Կրոմիցկի, ինչքան քիչ անկեղծութիւն կայ քո մէջ. առաջ ասում էիր, թէ նրա համար էս առաջարկում ինձ ընկերանալ, որ ուղում ես աւելի շահած լինեն բարեկամներդ, քան օտարները, իսկ հիմա բանից երևում է, որ այդ ամենից շատ քեզ համար է անհրաժեշտ: Նա, — շատ ծարպիլն է, — պատասխանեց, թէ այդպիսի գոր-

ծերի մէջ օգուտը պէտք է երկու կողմանի լինի և իւր ցանկութիւնը՝ ձեռքի տակ աւելի մեծ դրամագլուխ ունենալ՝ շատ բնական է.— քանի շատ միջոցներ ունենայ մի ձեռնարկութիւն, այնքան նա հաստատ կը լինիս ըի Վերջոյ,—աւելացրեց նա,—պսակելով Անելկայի վրայ առանց բաժինքի, յոյս ունէի, որ կարող եմ դիմել նրա ազգականների օգնութեանը զոնէ այն դէպքում, երբ այդ օգնութիւնը կարող է օգտաւէտ լինել և նրանց համարս։ Սաստիկ կատաղած էր, մանաւանդ աւելի բարկացաւ, երբ ասացի նրան, թէ Անելկային առանց բաժինքի չի առնիլ, որովհետեւ ես նրան ցմահ եկամուտ կը կտրեմ։

—Այդ ասացիք դուք։

—Այո, ինչ որ սրտումս կար բոլորն ասացի։ Անելկային,—ասացի,—սիրում եմ ինչպէս իմ հարազատ աղջկան, և յատկապէս նրան ապահովացրած լինելու համար նրան դրամագլուխ չեմ կտակի, այլ միայն եկամուտ կը կտակեմ։ Դրամագլուխն,—ասացի,—կարող է կորչել քո ձեռնարկութիւնների մէջ (Ասուած գիտէ նրանք ինչ վերջ կունենան), իսկ եկամուտը Անելկային այնքան կապահովացնի, որ զոնէ անկարիք կեանք կունենայ։ Իսկ եթէ դուք երեխաներ ունենաք, նրանց կը հասնի դրամագլուխը Անելկայի մահից յետոյ։ Ահա այս է իմ օգնութիւնը, զոնէ գլխաւոր օգնութիւնը, որովհետեւ միշտ պատրաստ եմ նրան նա և փոքր բաներում օգնելու։

—Դորանով էլ խօսակցութիւնը վերջացան։

—Համարեա դրանով։ Տեսնում էի, որ սաստիկ գրգռւած է։ Կարծում եմ նրա ջիգրն ամենից շատ բերում էր և այն, որ Անելկային կտակում եմ ոչ թէ դրամագլուխ, այլ միայն տոկոս.— դրանից նա կը դուշակէր, ինչքան քիչ հաւատ եմ ընծայում նրա գործերին։ Գնալիս ասաց, թէ կաշխատի ընկերներ գտնել օտարների մէջ և յոյս ունի, որ ուրիշները իրան աւելի համակրութեամբ կը վերաբերեն և գործի մասին աւելի պարզ հասկացողութիւն կունենան։ Համբերութեամբ լսեցի նրան մինչև վերջը։ Երէկ գնաց բելգիացիների հետ զբօսնելու, բայց նրանցից էլ անբաւական է մնացել։ Գուշակում եմ, որ նրանց էլ կամեցած կը լինի իրան ընկեր դարձնել, բայց դարձեալ սխալւած կը լինի իւր հաշիւների

մէջ: Գիտեա, Լէօն, ինչ եմ մտածում այժմ: Այն, որ նրա գործերը երեւի վատ են, որ նա այդպէս տենդաչին կերպով աշխատում է ընկերներ գտնել: Եւ պէտք է քեզ ասեմ, որ այդ միտքը մաշում է ինձ... Եթէ ծիշտ որ այդպէս է, այն ժամանակ հասարակ զգուշութիւնը պահանջում է նրա հետ ոչ մի գործ չբռնել, բայց աւելի հասարակ ազգականական պարտականութիւնը պահանջում է օգնել նրան, սկի չլինի դոնէ Անեկաչի խաթեր համար: Ահա այս էր, որ ուզում էի քեզ ասեմ:

—Նրա գործերը ամենեւին այդպէս չուսահատ չբռնեմք մէջ չեն, ինչպէս դուք էք կարծում,—ասացի ես ու սկսեցի պատմել բոլոր իւր անհաշիւ իմացածս: Աւելացրի, որ արդէն վաղուց նոյն Կրոմիցկու վարմունքից զուշակում էի, որ նա փող է փնտռում, փողի կարիք ունի, և յատկապէս դրա համար գնացի Վիէննա: Հորաքոյրս այն աստիճան հիացած էր իմ ուշիմութեան ու տակտիկայի վրայ, որ սենեակի մէջ ման գալով սկսեց ինքն իրան խօսել ու յաճախակի կրկնել՝ «ամեն բանում հանձարեղ է»: Ի վերջոյ գնաց ասելով, թէ գործը ամբողջապէս թողնում է ինձ վրայ և առաջուց տալիս է իւր համաձայնութիւնը այն ամեն բանին, ինչ որ ես կանեմ:

Աչքի անցրի երէկւայ գրածս յիշատակարանում և կէս ժամից յետոյ նոյնպէս իջայ ներքեւ: Մերոնք բոլորը նստած էին թէյի սեղանի շուրջը, բայց նստած էին բռնազբօսիկ չիբքով: Պանի Յելինան կարծես հիւանդ լինէր, Անեկան կարծես մի բանից վախեցած լինէր, իսկ հորաքոյրս բարի կերպարանքը բարկութիւնից բոլորովին կարմրել էր: Միայն Կրոմիցկին էր ձեւանում, թէ հանդիսաւրադիր է կարդում, բայց նա էլ էր թթւած և այնպիսի տեսք ունէր, կարծես ծանր հիւանդութիւնից նոր է վեր կացել:

—Գիտեա, — ասաց հորաքոյրս, զխօսվ անելով դէպի Անեկան, — ինչ ուրախալի լուր է հաղորդել ինձ:

—Ձէ, չգիտեմ,— ասացի ես ու նստեցի սեղանի մօտ:

—Բա, ինչպէս չէ, այն, որ երկու շաբթից յետոյ, եթէ Յելինայի առողջութիւնը ների, պէտք է գնաց Օդեսսա կամ մի աւելի հեռու տեղ:

Եթէ այդ բոսկին կացձակը խփէր սեղանի մէջտեղին, ես

աւելի քիչ կապշէի ու կը զարմանայի: Աներկբայ զգում էի, որ սիրտս դադարում է բարախելուց:

Նայեցի Անելկային,—նա կարմրեց, կարծես նրան բռնեցին մի վատ բան անելիս,—և հազիւ հազ կարողացայ հարցնել.

—Ինչո՞ւ, ինչի՞ համար:

—«Ինձ շատ նեղութիւն են պատճառում Պլոշովում», հասկանում ես,—ծաղրում էր հօրաքոյրս Անելկային,—«չեն ուզում ինձ վրայ բեռը դառնան, տեսնում ես ինչքան բարի են: Երեւի կարծում են, որ ինձ համար օգտակար է միայնութիւնը, իսկ թէ՛ ծերութեան հասակումս մէն մենակ մնամ Պլոշովի տան չորս պատերի մէջ, այդ ինձ համար համ դուրեկան կը լինի, համ էլ առողջարար... Ինչպէս չէ, ամբողջ գիշերը փոխանակ քնելու նստել, այդ հարցի մասին են մտածել:

Հօրաքոյրս աւելի բարկացաւ և գլուխը դարձրեց դէպի Կրոմիցկին.

—Զլինի՞ դու ես նախագահել այդ ժողովին:

—Ամենեւին ոչ,—պատասխանեց Կրոմիցկին,—ինձ սկի չեն էլ հրաւիրել. բացց ենթադրելով, որ ամուսինս նրա համար վճռած կը լինի գնալ, որ աւելի մօտ լինի ինձ, ես պէտք է ուրեմն շնորհակալ լինեմ նրա այդ վճառի համար:

—Այդ միայն ծրագիր է,—ասաց Անելկան:

Նայում էի Անելկային առանց աչքերս վաչր թողնելու, մոռանալով ամեն նախազգուշութիւն, իսկ նա չէր համարձակում ինձ նայել, և այդ աւելի ու աւելի էր ապացուցանում ինձ, որ նրա դիտաւորութիւնների մէջ գլխաւոր դեր խաղացողը իմ անձն է եղել: Խօսք չեմ գտնում նկարագրելու, թէ ինչ էի զգում ես այդ ժամանակ և ինչպիսի մահացու դառնութեամբ էր լցւած սիրտս: Անելկան լաւ գիտէր, որ ես միայն նրա համար եմ ապրում, նրանով զոյգութիւն ունեմ, որ նրան են պատկանում բոլոր մտածմունքներս, ինչ անում եմ չեմ անում, միայն նրան ունեմ ի նկատի, որ նա ինձ համար կեանքի ու մահու հարց է, և այդ բոլորը իմանալով հանդերձ նա բոլորովին հանգիստ սրտով վճռում է գնալ հեռանալ: Իսկ թէ ինչ կը լինեմ ես, կը կորչեմ թէ գլուխս պատովը կը տամ կը ջախջախեմ,—գրա մասին դա սկի ոչ մտածել է և ոչ

էլ ի նկատի է առել հետեւանքները: Ինքն աւելի հանգիստ կապրի, ոչ ոք չի կծկւի նրա աչքերի առաջ, ինչպէս քորոցի վրայ խրած բզէզ, ոչ ոք չի համբուրի նրա ոտները ու վրդովի նրա առաքինի խիղճը, իսկ նրա բոլոր ուզածն էլ հէնց այդ է: Ել ինչ տատանելու բան կայ, երբ կարելի է լիակատար հանգստութիւն ձեռք բերել այնպիսի շնչին գնով, ինչպէս է մի մարդու կտրւած կոկորդը:

Այդպիսի հաղարաւոր մոքերով լիքն էր դուլսա, թոյն էի զգում բերանումս: Էրու առաքինի ես ու առաքինի էլ կը մնաս,— ասում էի մտքումս Անելկային, բայց այդ նրա համար, որ դու անսիրտ ես: Եթէ մի շուն անգամ քեզ այնպէս սիրէր, ինչպէս ես եմ սիրում քեզ, էլի նրա համար պէտք է մի բան անէիր: Դու ինձ չես արել ամենաշնչին զիջումն անգամ, չես ցոյց տւել կարեկցութեան և ոչ մի կայծ, ոչինչ չես տւել ինձ, իսկ խել ես ամեն բան, ինչ որ միայն կարող էիր խելի եթէ դու կարողանայիր, կը խլէիր ինձնից մինչև անգամ քեզ նայելու հնարաւորութիւնս, թէպէտև հաստատ հաւատացած լինէիր, որ առանց քեզ իմ աչքերս կը հանգչէին յաւիտեան: Այժմ վերջապէս հասկացայ քեզ, այժմ գիտեմ, քո անսասանութիւնը նրա համար է այդքան մեծ, որ սիրտդ շատ փոքր է: Դու չոր ու սառը կին ես, իսկ քո առաքինութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ ամենամեծ եսականութիւն, որ ամենից առաջ իւր հանգստութիւնն է վնասում և պատրաստ է իւր հանգստութեան համար ամեն բան զոհել:

Ամբողջ նախաճաշի ժամանակ բերնիցս ոչ մի խօսք դուրս չեկաւ, իսկ յետոյ գնացի վերև, դուլսա բռնեցի և իմ ցաւազար ու տանջւած ուղեղով սկսեցի մտածել պատահածի մասին: Բոլոր ժամանակ դառնութիւնը մտածմունքներիցս չէր հեռանում: Նեղ սրտի տէր կանայք յաճախ անյողոյցող են մնում շնորհիւ մի տեսակ Ֆիլիստերական առաքինութեան: Նրանք, ինչպէս և ամեն մի մանրավաճառ, ամենից առաջ ուզում են, որ իրանց հաշւեմատեանները կանոնաւոր լինեն: Այդպիսի կանայք այնպէս են վախենում սիրուց, ինչպէս բուրժուան վախենում է փողոցային անկարգութիւններից, պատերազմից, վեհ խօսքերից, տաք-դուլ մարդկանցից, համարձակ մոքերից ու դիտաւորութիւններից: Նախ և առաջ հանգստութիւն, որովհետև միայն հանգիստ ժամանակ իսկական ու դրական գործերը

կարգին կը գնան: Ինչ որ սովորական, խոհական ու միևնույն ժամանակ գռեհկացած կեանքի սահմաններից դուրս է,—չարիք է և արժանի է խելքը գլխին մարդկանց կատարեալ արհամարհանքին: Աւաքինութիւնն էլ ունի իւր սարերն ու ձորերը, բայց ունի և իւր տափաստները: Մեծ մտատանջութեան մէջ էի այժմ մի վերին աստիճանի հոգեմաշ հարցի վերաբերմամբ, թէ արեւօք Անելկան էլ այն տափակ-առաքինի կանանցից է, որոնք խիլը վաճառականի պէս են ուզում վարեն իրանց հաշիւները և նրա համար սիրոյն անձնատուր չեն լինում, որ այդ զգացմունքը նրանց սրտից ու գլխից բարձր է: Մտքումս աչքի էի անցնում ամբողջ անցեալը և ապացոյցներ էի որոնում անցեալում: Ո՞վ գիտի,—ասում էի ինձ ու ինձ,—նրա այդ պարզ օրէնսգիրքը, որով նա ինձ տանջում ու զինաթափ է անում, չի հիմնուած արդեօք բոլորովին նոյն հիմքի վրայ: Ինձ յաճախ թւացել է, որ Անելկան յիշաւի մի հազազիւտ բնաւորութիւն է, միւս կանսնց նման չէ, անմատչելի է, ինչպէս Ալսերի ձիւնապատ զագաթը, որովհետեւ նրա մէջ թէք զծեր չկան և նա ուղղահայեաց կերպով դէպի երկինք է բարձրանում: Բայց նոյն այդ հազազիւտ բնաւորութիւնը շատ բնական է համարում, որ իւր մարդու հողաթափները կոխոտում են այդ մաքուր ձիւնը: Այս ի՞նչ բան է: Հէնց որ ընկնում եմ այդպիսի մտածմունքների մէջ, զգում եմ, որ խելագարուելու մօտ եմ, զգում եմ անկարողութեան նշաններ, և եթէ կարողանայի մի հարւածով տապալել, յետոյ ոռնատակ տալ կեանքի այդ դարշելի կարգ ու կանոնները, թքել նրանց վրայ, ես անպատճառ կը տապալէի, ոտնակոխ կանէի, թքի կը հաւասարեցնէի ու քառս կը դարձնէի ամբողջ աշխարհը և կը ջնջէի երկրիս երեսից ամեն արարած: Վիէննայից վերադառնալիս գերերկրային տաճար էի կառուցանում, որի մէջ Անելկային պէտք է սիրէի այն սիրով, ինչ սիրով Դանտը սիրում էր Բէատրիչէին. ես կառուցեցի այդ տաճարը տանջանքներից, որոնց մէջ, ինչպէս կրակի մէջ, մաքրւել է իմ սէրը, անձնուրացութիւններից, զոհաբերութիւններից, որ և է կերպով, թէկուզ հրեշտակային, գերերկրային կերպով պատկանած լինեմ նրան և զգամ, որ նա էլ պատկանում է ինձ: Իսկ այժմ մտածեցի, որ չարժէ անգամ նրան այդպիսի բան ասել, որ նա ոչինչ չի հասկանայ, չար-

Ժէ նրան այդ քան վեր բարձրացնել, որովհետեւ այդքան բարձրութիւն վրայ օդը նրան քշութիւն կանխի՝ նա սրտի խորքում զուցէ և համաձայնի, որ ես սիրեմ իրան, տանջւեմ իւր համար (այդ միշտ շոյում է մարդու անձնասիրութիւնը), բայց ոչ մի պայմանի, ոչ մի կապակցութեան, թէ կուզ զուտ հոգեկան կապակցութեան նա չի համաձայնի, որովհետեւ նա ինձ չի հասկանալ, որովհետեւ նա միայն մի կախումն ու մի իրաւունք է հասկանում, այն իրաւունքը, որ տալիս է մարդու խալածը, և նրա հոգին անկարող է տափակ ու սովորական ամուսնական հաշապահութիւնից վեր բարձրանալ:

Սաստիկ, շատ սաստիկ ափսոսում էի, որ ես այն զնացքում չեմ եղել, որ հողաթմբից ցած է զլորւել: Այդ ափսոսանքս նոյնքան իմ զայրոյթիցն էր դէպի Անեկալի խտտասրտութիւնը, որքան և Ֆիզիկապէս ու հոգեպէս կատարելապէս ուժասպառ լինելուցս: Մահն ինձ երեւում էր այնպէս, ինչպէս քունը այն մարդուն, որը մի քանի անքուն գիշերներ է անց կացրել իւր սիրած հիւանդի կողքին: Միւսնոյն ժամանակ մտածում էի, որ եթէ ինձ րեւէին Գաշտէյն խեղաթիւրւած, արիւնշաղախ, այն ժամանակ գուցէ այդ կնոջ սիրտը մի քիչ փափկէր: Իսկ ներկայումս ինձ այդ աւելի է հարկաւոր, քան որ և է ուրիշ բան: Եւ յանկարծ միտքս եկաւ երեկւայ Անեկան, որ հօրաքրոջս հետ միասին եկել էր ինձ դիմաւորելու, չիշեցի նրա երկիւղը, նրա ուրախութիւնը, նրա լաց լինելու պատրաստ աչքերը, նրա զգգւած մազերը, և ինձ տիրեց մի անսահման սէր, որ հարիւր անգամ աւելի իրական էր, քար բոլոր մտածմունքներս ու դատողութիւններս: Այդ՝ բոսնիական, յանկարծական յուզումն էր սրտի, որ — աւանդ — իսկոյն և եթ վերստին սկսեց լցւել կասկածոտութեան թոյնով: Երեկւայ բոլոր տեսածս կարելի էր բոլորովին ուրիշ կերպ քացատրել:

Ո՞վ գիտէ, ես էի այդ դէպքում գլխաւոր դեր խաղացողը թէ հօրաքրոջս: Ի վերջոյ դիւրազգաց կանայք միշտ կարեկցութեան մեծ պաշար են ունենում մինչև անգամ դէպի օտարները, ուր մնաց թէ դէպի ազգականները, մանաւանդ երբ մի աղէտ նրանց յանկարծ է վրայ հասնում: Ինչո՞ւ չպէտք է Անեկան էլ խօր աղղւէր իմ մահւան լուրը լսելիս և ուրախանար՝ ինձ կենդանի տեսնելիս: Եթէ

Նրա փոխարէն հօրաքրոջս մօտ հիւր եկած լինէր պանի Մեհաոխնակին, նա էլ ի հարկէ առաջ կը վախենար, իսկ յետոյ կուրախանար իւր և իսկ նոյն ձևով, նրան էլ կը տեսնէի առանց ձեռնոցների, առանց գլխարկի, զգզզած մազերով: Ինձ թուում էր, որ այդտեղ մոլորւելու բան չկայ: Անելկան լաւ դիմէր, որ իւր գնալը ինձ համար աւելի մեծ աղետ կը լինի, քան զնացքի խորտակելը, աւելի մեծ կորուստ կը լինի, քան ձեռքս կամ ոտքս կորցնելը, սակայն չի տատանւել. և ոչ մի բոպէ: Պարզ զգում էի, որ այդ միտքը նրանն է: Նա ուղեցել է մօտ լինել իւր մարդուն, իսկ թէ ինչ կըզայ իմ գլխին, դրա մասին սկի չի էլ մտածել:

Ես կրկին զգացի, որ գունատւում եմ բարկութիւնից, նախանձից ու զայրոյթից, և որ մի քայլ է փնում միայն, որ խելագարւեմ: «Սպասիր,—ասում էի ինքս ինձ, երկու ձեռքով սեղմելով քունքերս,—սպասիր... Կարելի է նա նրա համար է գնում: որ սիրում է քեզ և զրում է, որ այլ ևս դիմադրել չի կարող: Կար՛ի է ճիշդ որ այդպէս է: Եւ այդպիսի մտքեր էին ծագում մէջս. բայց համապատասխան հող չգտնելով կորչում էին, ինչպէս ապառաժի վրայ ընկած սերմեր, և միայն դառը հեգնութիւն էին զարթեցնում մէջս: Ուզում էի ինքս ինձ տանջեմ մինչև վերջին ծայրը: «Այո,—ասում էի ես,—այդ տեսակ սէրը նման է այն կարեկցութեանը, որից դրդւած հիւանդի գլխատակից բարձր հանում են, որպէսզի հիւանդը քիչ խռնուացնի ու շատ տանջւի: Ես աւելի քիչ կը տանջւեմ, բայց դրա փոխարէն Կրոմիցկու համար աւելի հեշտ կը լինի նրան առատ-առատ մսիթարանքներ տալ, որ այդ իդէալական էակը շատ սովորել է ստանալ իւր մարդուց:

Եւ Անելկան ատելի դարձաւ ինձ այդ բոպէին: Առաջին անգամ կեանքումս զգացի, որ աւելի կուզէի, որ չիրաւի Անելկան Կրոմիցկուն սիրէր,—այն ժամանակ նա աւելի քիչ զգւելի կը լինէր ինձ համար: Բարկութիւնից ու զայրութից խելքս կորցրել էի, պարզ տեսնում էի միայն, որ եթէ որ և է բանի չձեռնարկեմ, եթէ նրան վրէժխնդիր չլինեմ, գլխիս մի մեծ փորձանք կը դայ: Այդ մտքի ազդեցութեան տակ տեղիցս վեր թռայ, ինչպէս հրաշէկ երկաթի հարւածից, վեր առայ գլխարկս և վազեցի Կրոմիցկուն փնտռելու..

Նա ոչ տանն էր, ոչ պարտէզումը: Գնացի Վինդէլ-Բանի մօտ, աչք ածեցի ընթերցարանը, — այնտեղ էլ չկար: Մի բոսիկ կանգ առաջ ջրվէժի մօտի կամուրջի վրայ: Բուռն քամին ուղղակի երեսովս էր խփում փոշիացած ջրի քուլաները: Այդ զարմանալի կերպով թարմացրեց ինձ: Գլխարկս վերցրի, գլուխս առաջ բռնեցի, և բոլոր մազերս թրջւեցին: Մի տեսակ անասնական բաւականութիւն էի զգում այդ զովութիւնից: Ուշքս տեղն եկաւ: Մէջս մնացել էր միայն պարզ ու վճռական ցանկութիւն խանգարել Անեկայի մտադրութեանը: Մտքումս ասում էի նրան. «մնացիր. որ դու չես գնաց, իսկ յետոյ ես քեզ հետ կը վարեմ այնպէս, ինչպէս քեզ համար վճարող մարդ: Այժմ պարզ տեսնում էի այն միջոցները, որ ինձ կարող էին հասցնել այդ նպատակին, և չէի վախենում Կրոմիցկու հետ խօսելիս յանկարծ բերնիցս մի յիմար բան թռցնեմ: Այդ բոլորը ինձ բոլորովին սթափեցրին:

Կրոմիցկուն դառաւ Շտրաուսբրինգերի հիւրանոցի մօտ լրագիր կարգալիս: Ինձ որ տեսաւ, մոնոկլը աչքիցը վայր թողեց ու ասաց.

— Ես էլ հէնց ուզում էի քո մօտ գամ:

— Գնանք Կալցերովէզ:

Գնացինք:

Առանց սպասելու որ Կրոմիցկին սկսի, ես առաջինը խօսք բաց արեցի:

— Հօրաքրոջս ինձ ասաց, — ասացի ես, — ձեր երեկաջ խօսակցութեան մասին:

— Յաւում եմ, որ խօսեցի նրա հետ:

— Որովհետեւ դուք երկուքդ էլ այնպէս հանգիստ չէք խօսել, ինչպէս պէտք է խօսել գործի մասին: Սիրելիս, թոյլ կը տաս ինձ քեզ հետ բոլորովին անկեղծ լինեմ: Հօրաքրոջս պէտք է ճանաչել: Նա աշխարհումս ամենաարժանաւոր կիներն է, բայց մի թուութիւն ունի, այդ՝ այդ նրա աւելորդ անձնավստահութիւնն է: Նա առողջ դատողութիւն շատ ունի և սիրում է միշտ բոլորին ցոյց տալ, թէ ինքը առողջ դատողութեան տէր է, այդ պատճառով իրան պատահած ամեն բանի վրայ սիրում է նայել թերահաւատութեամբ, որ ի հարկէ չափազանցնում է: Դրանից է, որ նա մեծ մասամբ միշտ բացասական պատասխան է տալիս: Մերունի Խառոտկին դրա մա-

սին քեզ շատ բան կարող էր պատմել: Պէտք է նրան ժամանակ տալ մտածելու, և որ զլսաւորն է, չպէտք է նրան զրգռել, թէ չէ կը յամառի... իսկ դու չես կարողացել խուսափել այդ բանից:

—Բայց ինչո՞վ կարող էի ես նրան զրգռել... Եթէ մէկը այստեղ կարող է գործի մասին խօսել, այդ ես եմ:

—Դու լաւ չես արել, որ չիշեցրել ես, թէ Անեկային առանց բաժինքի ես առել: Հօրաքոյրս մինչև այժմ բարկացած է այդ բանի վրայ:

—Ես այդ այն ժամանակ ասացի, երբ նա սկսեց երեսօվս տալ Գլուխովի ծախելու: Ի վերջոյ ես ուղիղն եմ ասել: Գլուխովի վրայ այնքան պարտք կար, որ Անեկային նրանից ոչինչ չէր համնի:

—Իսկապէս ասած ախար ինչո՞ւ ծախեցիր այդ թշուառ Գլուխովի:

—Պէտք էր հաճելի բան անել այն մարդուն, որից կախած էր իմ ամբողջ ապագան, այսինքն իմ ամբողջ վիճակը: Երբ ուրիշ ճար չկայ, պէտք է անել այն, ինչ որ հարկաւոր է, չէ: Բացի այդ ինձ լաւ դին տեսցին:

—Այդ ես միայն այնպէս հարցրեցի... Մանաւանդ հօրաքոյրս վիրաւորել է քո խօսքերից այն պատճառով, որ նա մտածում է Անեկայի մասին:

—Մտածում է նրան եկամուտ կտակել:

—Քեզ իբրեւ զաղտնիք կասեմ, որ չէ: Գիտեմ, նա քեզ երէկ այդպէս է ասել, որովհետեւ դու նրան բարկացրել ես: Նա ուզեցել է քեզ դրանով ցոյց տալ, թէ չի հաւատում քո գործնական ընդունակութիւններին: Բայց իսկապէս այդպէս բան չկայ: Ինձ հետ նա շատ անգամ է խօսել այդ բանի մասին, և ես, իբրեւ նրա ապագայ ժառանգը, աւելի լաւ կարող եմ իմանալ նրա միտքը...

Կրօնիցիկին խոր-խոր նայեց երեսիս:

—Եւ մանաւանդ որ այդ քեզ, իբրեւ ապագայ ժառանգի, ֆնաս է:

—Ճշմարիտ է, — ասացի ես, — բայց ես սկի իմ եկամուտներս չեմ կարողանում ծախսել, այդ պատճառով դրա մասին կարող եմ սառնասիրտ կերպով խօսել: Քեզ, իբրեւ գործի մարդու, այդ կարող է զարմանք պատճառել, բայց եթէ դու չես կարողանում

այդ ուրիշ կերպ բացադրել, նայել ինձ վրայ, իրրեւ տարօրինակ մարդու վրայ: Այդպիսի մարդիկ էլ կան աշխարհիս երեսին: Եւ ահա քեզ ասում եմ, որ առաջինը՝ մտքովս էլ չի անցնում սահմանափակել հօրաքրոջս առատաձեռնութիւնը, երկրորդը՝ հաստատ գիտեմ, որ նա կտակել է Անեկային ոչ թէ եկամուտ, այլ դրամագլուխ: Բնական է որ իմ ազդեցութիւնը այդ՝ դէպքում կարող է մեծ դեր կատարել, բայց ես հաւատացնում եմ քեզ, կուգես հաւատա, կուգես մի հաւատա, ինչպէս քո կամքն է, որ իմ ազդեցութիւնը գործ կը դնեմ աւելի յօգուտ քո, քան ի վնաս քո:

Արոմիցիկին ձեռքս ամուր նեղմեց: Նրա ուսերը շարժում էին մանէկէնի ուսերի պէս: Նա չափից դուրս անտանելի էր այդ ընկերին: Երեւի նա ինձ աւելի յիմարի տեղ էր դնում, քան սարօրինակ մարդու տեղ, բայց հաւատում էր ինձ (իսկ ինձ ամենից շատ այդ էր հարկաւոր), և եթէ հաւատում էր, չէր սխալւում, որովհետեւ ես իմ մէջ վճռել էի, որ Անեկան իսկապէս դրամագլուխ կըստանայ և ոչ լոկ եկամուտ:

Զգում էի նոյնպէս, որ Արոմիցիկու սիրտը շատ է ուզում՝ հարցնել՝ Վինչքան, Քրք, բայց հասկանում էր, որ հարցնելը անքաղաքավարութիւն կը լինէր, և լուում էր, կարճես զսպելով սրտի յուզումը, իսկ ես շարունակեցի.

Բայց դուք չպէտք է մոռանաք, որ հօրաքրոջս հետ պէտք է իմանալ վարւել: Թէև նա միտք ունի պարզեացրել Անեկային, դուրս համար կարող եմ երաշխաւոր լինել. բայց մինչև նա փող չհանի ու դնի սեղանի վրայ, իսկ դու չդնես իմ գրպանը, ամեն բան կախած կը լինի նրա կամքից ու մինչև անգամ նրա քմահաճութիւնից: Մինչդեռ ինչ է ձեր արածը: Երեկ դու ես նրան բարկացրել, այսօր՝ Անեկան, և այն էլ այդքան սաստիկ: Իբրեւ նրա ապագայ ժառանգ ես պէտք է ուրախանայի և ձեզ չզգուշացնէի, իսկ ես, ինչպէս տեսնում ես, հակառակն եմ անում: Հօրաքրոջս սաստիկ դուր չի եկել Անեկայի գրութիւնը, նա դարձաւ դէպի քեզ արտաքուստ բարկացած ձևանալով, բայց ներքուստ յուսալով, որ նրա կողմը կը պահես, իսկ դու կարծես ինքդ էլ հաւանութիւն տւիր կնոջդ ու... զոքանչիդ ծրագրին:

— Թանկագին բարեկամ (Արոմիցիկին կրկին պինդ սեղմեց ձեռ-

քըս), անկեղծ եմ ասում քեզ, որ այդպէս վարւելու պատճառն այն էր, որ չարացած էի հօրաքրոջս վրայ: Իսկապէս այդ ծրագիրը անմիտ ծրագիր է: Իմ ամենաշատ չտրած բանը տաք-գլխութիւնն է, որ իմ տիկիներս չափից դուրս ունենւ: Նրանց գլխիցը երբէք դուրս չի գալիս, որ չպէտք է ի չարը գործ դնեն ձեր հիւրասիրութիւնը, որ չպէտք է մինչև վերջը Պլոշովում նստեն, et cetera: Այդ այնքան ասել են, որ մինչև կոկորդս են հասցրել... Մինչդեռ գործերը այնպիսի դրութեան մէջ են: Ես հօ չեմ կարող ամբողջ ընտանիքս Թուրքեստան տանել, իսկ մի բան որ ես այնտեղ եմ ապրելու, —ինձ համար միենոյն է, Անեկան Օդեսսայում կապրի թէ Վարշաւայում: Երբոր ես այդ հեռու երկրներից կազատեմ, և ինչպէս յոյս ունեմ, նշանուոր կարողութեան տէր դարձած, այն ժամանակ պարզ բան է ինչպէս հարկն է տուն տեղ կը դնեմ: Պէտք է սպասել ամենաշատը մի տարի ևս: Եթէ գործերս ուրիշին յանձնելու լինեմ, փոխարէնը վճար կը ստանամ... Այնեւ է, որ եթէ Պլոշովը չը լինէր, ես պէտք է մի ժամանակաւոր բնակարանի հողս քաշէի տիկիներս համար. բայց մի բան որ հօրաքրոջը առաջարկում է իւր տունը և հէնց ինքը ցանկանում է, որ նրանք իւր մօտ ապրեն,—իմ կողմից չիմարութիւն կը լինէր ուրիշ տեղ փնտռել: Զոքանչս նոր է ոտքի կանգնել: Ո՞վ գիտի, ինչպէս կը լինի վերջը. իսկ եթէ վատ լինի, ամեն բան կընկնի Անեկայի վզին, որ դեռ ջահել է ու անփորձ: Իսկ ես այժմ ոչ մի կերպ չեմ կարող նրանց մօտ մնալ: Ես առանց այն էլ այստեղ կարծես ասեղների վրայ նստած լինեմ, որ քեզ հօրաքրոջը ընկերացնելու յոյսս է միայն ինձ այստեղ այսքան երկար պահողը: Ինչ որ սրտումս կար, բոլորն ասացի քեզ, այժմ դու ասա ինձ, թէ և ինչպէս կարող եմ յոյս ունենալ ձեր օգնութեան վրայ:

Ես ազատ շունչ քաշեցի:

Անեկայի ծրագիրները խորտակւած էին:

Հողիս ուրախութիւնից փառաւորեց, որովհետեւ ուզածս արեցի: Բացի այդ թէև իմ սէրը դէպի Անեկան այդ բոլորին նմանում էր խորին ատելութեան, բայց այդ ատելութիւնը, որ այժմ կազմում էր իմ դոյութեան գլխաւոր հիմքը, ինչպէս և սէրը, կերակուր էր պահանջում: Այդպիսի կերակուր ատելութեանս հա-

մար կարող էր լինել միայն Անելկայի ներկայութիւնը: Ի վերջոյ
Կրոմիցկու խօսքերից եզրակացրեցի, որ ես առանց մեծ դժարու-
թեան կարող եմ իրագործել սրտիս ամենամեծ փափագը, այսինքն
հեռացնել թշնամուս համարեա անորոշ ժամանակով: Բայց չետոյ
ցոյց չտւեցի ամենաշնչին յուզումն անգամ, որովհետեւ կարծում
էի, որ աւելի լաւ կը լինի, եթէ Կրոմիցկին շատ հեշտութեամբ
չստանայ մեր հաւանութիւնը, այլ ստիպւած լինի մի քիչ խնդրել:
Այդ նպատակով ասացի.

— Առաջուց քեզ ոչինչ չեմ կարող ասել: Ամենից առաջ ինձ
մանրամասն բացադրիր քո գործերի դրութիւնը:

Կրոմիցկին խօսեց այնպէս տաք-տաք, ինչպէս խօսում են
մարդիկ իրանց սիրած առարկայի մասին: Նա ամեն բոլոր կանգ
էր առնում, բռնում էր կոծակիցս կամ տանում ժայռին էր դէմ
անում, իսկ երբ հարկ էր լինում մի համոզեցուցիչ ապացոյց բե-
րել, կայծակի արագութեամբ մոնոկլը աչքին էր խցկում և ուղիղ
երեսիս նայում, ցանկալով իմանալ, ինչ ազդեցութիւն կը դործեն
իւր խօսքերը ինձ վրայ: Այդ բոլորը նրա փայտէ, թխթխկոն ձայնի
հետ միասին ինձ համար անտանելի էր, բայց պէտք է խոստովան-
ւեմ, որ նա սուտ չէր խօսում: Իմացայ նոյնը, ինչ որ զիտէի
կրտսեր Խաչատուրիւսկու նամակից: Գործը հետեւեալ դրութեան մէջ
էր:— Սրդէն արագին փող էր վեր դրած զանազան նիւթեր մատա-
կարարելու համար, օգուտը կարող էր մեծ լինել, որովհետեւ մի
քանի բաների վերաբերմամբ Կրոմիցկին մենավաճառութիւն ունէր:
Իսկ երկիւղը նրանումն էր, որ այն փողը, որ պէտք էր անցապաղ
ծախսել, չեւ էր ստացւում երկար ու բարակ դիւանական գործա-
վարութիւնից չետոյ, և երկրորդը՝ Կրոմիցկին ինքը գործ ունէր
երկրորդական մատակարարողների հետ, որոնց շահը պահանջում էր
վատ նիւթ մատակարարել, մինչդեռ ամբողջ պատասխանատու-
թիւնը միայն նրա վրայ էր ընկնում: Այդ վերջին կէտը նրան որոշ
աստիճան կախման մէջ էր դնում զինւորական տնտեսական վար-
չութիւնից, որ ասեմք իրաւունք ունէր միայն ամենալաւ նիւթերն
ընդունելու: Աստուած գիտէ ինչ վտանգ կարող էր սպառնալ Կրո-
միցկուն այդ կողմից:

Նրա երկար պատմութիւնը լսելուց չետոյ պատասխանեցի.

—Սիրելիս, այն բոլորից յետոյ, ինչ որ դու ասացիր, ոչ ես, ոչ հօրաքոյրս չենք կարող քեզ հետ ընկերանալ:

Կրոմիցկու երեսը մի բռնեմք դեղնեց:

—Ինչո՞ւ, ի՞նչ պատճառով:

Ձնայելով քո բոլոր նախազգուշութիւններին, մի օր յանկարծ քննութեան տակ կ'ընկնես, իսկ մենք ցանկութիւն չունենք դատի ենթարկելու:

—Այդպէս որ մտածելու լինենք, ոչ մի գործի չպէտք է ձեռնարկենք:

—Մենք սկի կարիք էլ չունենք որ և է բանի ձեռնարկելու: Դու ուզում էիր, որ մենք քեզ հետ ընկերանանք. իսկ դրա համար ինչքան փող է հարկաւոր:

—Էլ ինչ խօսենք դրա մասին... Բայց եթէ դուք կարողանայիք գործի մէջ դնել զոնէ եօթանասուն հինգ հազար ռուբլի...

—Ձէ, չենք կարող և պարտական չենք համարում մեզ: Իսկ որովհետեւ դու մեր ազգականն ես, կամ աւելի ճիշտը մեզ ազգական ես դարձել, դրա համար կամենում եմ քեզ օգնել: Կարճ՝ ես քեզ կը տամ եօթանասուն հինգ հազար ռուբլի հասարակ մուրհակով:

Կրոմիցկին կանգ առաւ և աչքերը կուշ ածելով նայեց ինձ, ինչպէս քնատեղից նոր վեր կացած մարդ: Բայց այդ երկար չտևեց: Ակներեւ է նա մտածեց, որ սաստիկ ուրախութիւն արտայայտելը իւր կողմից անքաղաքագիտութիւն կը լինի: Վաճառականական նախազգուշութիւնը (որ այդ դէպքում բոլորովին աւելորդ էր) նրա մէջ յաղթող հանդիսացաւ: Նա ձեռքս սեղմեց ու ասաց.

—Շնորհակալ եմ քեզնից: Ի՞նչ տոկոսով:

Դրա մասին տանը կը խօսենք: Այժմ ինձ ժամանակ է վերադառնալու: Պէտք է խօսեմ հօրաքրոջս հետ:

Տուն վերադառնալիս մտածում էի, արդեօք իմ վարձուքը Կրոմիցկուն չափից դուրս կ'սկածելի չի երևայ, արդեօք գլխի չի ընկնի, թէկուզ մասամբ, թէ ինչու՞ն է բանը: Բայց իմ երկիւղը դուր էր: Տղամարդկանց յաճախ կուրացնում է ոչ թէ սէրը դէպի կինը, այլ դէպի իրանց անձը ունեցած սէրը: Միւս կողմից Կրոմիցկին նայելով մեզ վրայ իւր դրական ու

վաճառականական բարձրութիւնից, թէ ինձ թէ հօրաքրոջս ֆանտազէօրի տեղ է դնում, որոնք գործի մասին ոչ մի հասկացողութիւն չունեն, և, բացի այդ, ուրիշ միջնակ դիւրս լիքն են զանազան հնացած նախապաշարութիւնով, ի թիւս որոց և այն հասկացողութեամբ, թէ պէտք է համերաշխ լինել ազգականների հետ ու համարեա ամեն կողմից այնպիսի տիպ է, որ ոչնչով նման չէ մեզ, այդ պատճառով էլ մենք, թէև ականաց, նրան ինքնակոչի պէս մի բան ենք համարում։ Մեր պարտեզում, ամարանոցի մօտ, Անեղկան մի գեղջկուհուց պտուղ էր առնում։ Մօտից անցնելիս կոպիտ կերպով ասացի նրան.

—Դու չես գնաց, որովհետև ես չեմ կամենում:

Ճաշին նորից խօսք բացւեց տիկիներին գնալու մասին։ Այժմ Կրոմիցկին էլ խօսակցութեան մէջ խառնւեց և Անեղկայի ծրագիրը երեխայութիւն անւանւեց, որի վրայ խեղճ գլխին մարդը կարող է միայն ծիծաղել։ Նա, ի հարկէ, չկարողացաւ քաղաքավարի լինել ոչ իւր կնոջ, ոչ էլ պանի Յելինայի վերաբերմամբ, որովհետև նրա բնաւորութիւնը առհասարակ նուրբ ու զիրգ բնաւորութիւն չէ։ Ես համարեա բոլոր ժամանակ լուռ էի, ինչպէս այնպիսի մարդ, որ գործովը քիչ է հետաքրքրւում։ Անեղկան, — ես այդ պարզ տեսնում էի, — շատ լաւ հասկանում էր, որ Կրոմիցկին երգեհոնի պէս նւաղում է իմ ուզած եղանակը։ Նկատում էի, որ Անեղկան ամաչում էր նրա փոխաբէն և իրան սաստիկ ստորացած էր զգում։ Բայց սիրտս լիքն էր բարկութեամբ, և նրա ստորացումը ինձ բաւականութիւն էր պատճառում։

Բայց և այնպէս ես էլ առանց մնասի չարծայ։ Մինչև այժմ չեմ կարողանում հանգստանալ և չեմ կարողանում Անեղկային ներել։ Եթէ որ ես, Վիէննայից վերադառնալիս, կազմած չլինէի մեր դաշնադրութեան ծրագիրը, եթէ իմ այնքան ցանկութիւններս, իղձերս ու յոյսերս զոհած չլինէի, այն ժամանակ այսքան խորը յուսախաբած չէի լինի։ Բայց անբախտութիւնը ընկաւ գլխիս հէնց այն րոպէին, երբ ես Անեղկայի սիրուց ուզում էի հիմքից վերածնել, պատրաստւում էի այնքան վեր բարձրանալ, որքան մինչև այժմ երբէք չէի բարձրացել, որպէս զի նրա հետ հաւասար ու նրան մօտ լինեմ, և հէնց այդ ժամանակ նա առանց որ և

է յարգելի պատճառի անդուլթ կերպով կամեցաւ ինձ յուսահատութեան անդունդը գլորել: Նա իրան նեղութիւն անգամ չի տւել մտածելու թէ այդ ինչ ազդեցութիւն կունենայ ինձ վրայ, իմ գլխիս հօ մի փորձանք չի՞ բերի... Այդ մտածմունքները թուանաւորում են իմ ուրախութիւնը, որ Կրոմիցկին գնում է, իսկ Անէլիան մնում: Ապագան մի լուծում կը տայ այս բոլորին, բայց ես այն աստիճան վշտաբեկ եմ եղած, որ առաջուց ոչինչ չեմ կարող գուշակել: Մի լուծում, և ամենահասարակ լուծումը, այն է, որ ես հիւանդանամ որ և է ուղեղային հիւանդութեամբ: Ժամանակով այդ էլ կարող է պատահել, որովհետեւ ցերեկները տանջւում եմ սրտիս մորմոքից, իսկ գիշերները բոլորովին քուն չունեմ: Միևնոյն ժամանակ ծխում եմ ու ծխում անվերջ, համարեա այնքան, որ խեղքս կորցնում եմ, և այդպէս նստում եմ մինչև արշալոյս:

(Կը շարունակւի)